№ 73 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 6 — 1901 — ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 6 № 73

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Ներսիսեան հայոց հոգեւոր դպրոցի հոգաբարձութիւնը պատիւ ունի յայտնելու, որ ապրիլ ամսի 8-ին, ս. Նշան եկեղեցում, պատարագից յետոյ, դպրոցի բարերար

ՅՈՎՍԷՓ ԷՖԷՆԴԵԱՆՑԻ

հոգեհանգիստը կատարվելու է Վանքի մայր-եկեղեցու գաւթում։ 1—2

Ներսիսեան հայոց հոգեւոր դպրոցի հոգաբարձութիւնը պատիւ ունի յայտնելու, որ ապրիլ ամսի 7-ին, շաբաթ օրը, ս. Նշան եկեղեցում կատարվելու է դպրոցի բարերար հանգուցեալ

ԱՒԵՏԻՔ ՓԻՐՈՅԵԱՆՑԻ

հոգեհանգիստը։ 1—2

Շաբաթ, ապրիլի 7-ին, Հալաբարի Կարմիր-Աւետարան եկեղեցում,

ԱՒԵՏԻՔ ՍՈՒԼԽԱՆԵԱՆ ՍՈՒԼԽԱՆԵԱՆՑԻ

մահվան կիսամեակի առիթով, կը կատարվի պատարագ եւ հոգեհանգիստ, ուստի հանգուցեալի այրի Եղիսաբէթ Գրիգորեան Սուլխանեանց խնդրում է իր ամուսնու ծանօթներին եւ բարեկամներին ներկայ լինել պատարագին եւ հոգեհանգստին։ Պատարագը կը սկսվի ժամը 10½-ին, իսկ հոգեհանգիստը՝ 12-ին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միջոցներ որոնենք. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մամուլ. Նամակ Հին-Նախիջեւանից. Նամակ Զիատուրից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԻՋՈՑՆԵՐ ՈՐՈՆԵՆՔ

—

Մեր ինտելիգենտ ոյժերը փախչում են գիւղերից և զբաղվում են քաղաքի պարապմունքներով կամ գործարանական աշխատանքով։ Գիւղական տնտեսութիւնը՝ երկրագործութիւնը, այգեգործութիւնը և տաւարապահութիւնը՝ մնում են այն մարդկանց ձեռքում, որոնք շատ են պահպանողական և չեն ցանկանում ոչ մի փոփոխութիւն մտցնել իրանց կեանքի մէջ, կամ անընդունակ են նոր աշխատանքի եղանակներին ընտելանալու, եւ կամ այնքան ապահովված են գիւղական արդիւնքներով, որ դեռ կարող են մի կերպ կառավարվել տեղական հասոյթներով և առ այժմ յետաձգել իրանց արհեստի կատարելագործութեան կամ նոր արհեստ ընտրելու հարցը։

Եթէ գիւղատնտեսութիւնից կը փախչեն բոլոր այն ոյժերը, որոնք կրում են իրանց մէջ առաջադիմութիւն և կատարելագործութիւն մտցնելու ընդունակութիւններ, այն ժամանակ ժողովրդական այդ կարևոր արհեստը երբէք չի լաւանայ և ժողովուրդը ստիպված կը լինի կամաց-կամաց նուազեցնել իր պահանջները և ապրել աղքատ կեանքով, զրկելով իրան կեանքի յարմարութիւններից և վայելչներից։

Պէտք է մտածել ինտելիգենտ ոյժեր մտցնելու գիւղական կեանքի մէջ և բեղմնաւորելու ժողովրդական աշխատանքը։ Պէտք է տանք ժողովրդի ձեռքը հաստատ զէնք կուռելու այն ձախորդ ազդեցութիւնների դէմ, որոնք օրէ-ցօր հանդէս են գալիս գիւղատնտեսութեան ասպարէզում։

Եթէ բարձի թողի կանենք այդ կարեւոր գործը և զանցառութեան կը տանք մեր ժողովրդի բարեկեցութեան հարցը, մի ժամանակ կը տեսնենք քայքայված մեր ազգաբնակութեան բարօրութիւնը այնքան արմատական կերպով, որ այլ ևս դժուար կը լինի նրան վերականգնել առանց ծայրայեղ միջոցների և մեծ զոհաբերութիւնների։

Խնդիրը կարևոր է և պէտք է միջոցներ որոնել նրան աջող և նպատակայարմար կերպով լուծելու։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Գեներալ-ադիւտանտ Վաննովսկուն լուսաւորութեան մինիստր նշանակելու առիթով ռուսաց բոլոր լրագիրները յայտնում են այն կարծիքը, որ այսուհետեւ կը բարեփոխվի կրթական սիստեմը Ռուսաստանում։ Բարձրագոյն հրովարտակի մէջ, որ տպված է գեներալ Վաննովսկու անունով, ինչպէս յայտնի է, կան այդ մասին պարզ ցուցմունքներ։ Թագաւոր Կայսրը յայտնում է, որ կրթական գործը պէտք է դնել խելացի եւ արդար հիմքերի վրա։ Լրագիրները, խօսելով ցանկալի բարեփոխութիւնների մասին, բաժանվում են, համաձայն իրանց ուղղութեան եւ դաւանանքների, երկու բանակի։ Մէկը, համեմատաբար փոքրաթիւը, ցանկանում է, որ դպրոցական գործը ազատ զարգացման դրութեան մէջ չը լինի։ Այսպէս, «Московскія Вѣд.» լրագիրը կարծում է, որ դպրոցական գործի մէջ պէտք է մտցնել առողջացնող հոսանքներ. այդ միջոցներին կարելի է հասնել, ուժեղացնելով դպրոցի մէջ եկեղեցական ազդեցութիւնը. պէտք է ժողովրդական դպրոցները ամբողջովին յանձնել հոգեւորականութեան, իսկ միջնակարգ դպրոցների մէջ կրօնուսոյցները պէտք է մեծ ազդեցութիւն ստանան։ Գալով բարձրագոյն դպրոցներին՝ Մոսկվայի պահպանողական լրագիրը յանձնարարում է կրճատել այնտեղ սովորողների թիւը եւ մշակել այնպիսի ծրագիր, որ իրագործէր կրթութեան կրօնական-հայրենասիրական իդէալը։—Իսկ միւս լրագիրները հակառակն են պնդում. այն, որ կրթական գործը Ռուսաստանում պէտք է յարմարեցնել ժամանակի պահանջներին, դնել նրան այն բարձրութեան վրա, որին հասել է արեւմտեան աշխարհում։ Այսպէս, «Русскія Вѣд.» լրագիրը ասում է.

Վաղուց արդէն ասված է, թէ «մտաւոր ասպարէզում մեզ համար անկարելի է նահանջել», եւ ժողովուրդը կրթելու հոգսերի մէջ անհրաժեշտ է ամուր պահվել ճշմարիտ եւրոպական լուսաւորութեան սկզբունքների վրա, այն սկզբունքների, որոնց ճանաչել է Պետրոս Ի-ը, որոնց գործադրել են նրա յաջորդները եւ որոնք աւելի լայն գործադրութիւն ստացան Ալէքսանդր II-ի թագաւորութեան առաջին կէսում։ Նախա-պետրոսեան ժամանակները անցան, եւ ոչ միայն Մազնիցկու եւ Բունիչի ժամանակամիջոցին կամ 40-րորդ թւականների վերջին եւ 50-րորդ թւականների սկզբին տիրող կարգերին վերադառնալը, այլ եւ կամ Տօլստոյի եւ Դելեանովի մեզ այնքան մօտիկ ժամանակներին վերադառնալը հաղիւ թէ հնարաւոր լինի, մանաւանդ ցանկալի։

«С. Петербур. Вѣд.» լրագիրը իր կողմից ասում է, որ պէտք է դպրոցը ազատել մինչեւ այժմ տիրող բիւրօկրատական կարգերից, մտցնել նրա մէջ բարենորոգութիւններ. դպրոցական գործում ձայն պիտի ունենան ծնողները, որոնք եւ կաշկդեն մինիստրութեան եւ նրա հետ միասին աւելի առողջ, աւելի հաստատուն հիմքեր կը դնեն դպրոցական գործը առաջ տանելու համար։

Մօտիկ ապագան ցոյց կը տայ, թէ ինչպէս է հասկանում նոր մինիստրը այն գործը, որ Բարձրագոյն կամքով յանձնված է նրան։ Լրագիրները ողջունում են գեներալ Վաննովսկուն, իբրեւ մարդասէր եւ փորձված վարչական մարդու, որին խորթ են անցողական ազդեցութիւնները։

*

Կովկասեան մամուլի մէջ աշխատողներից վերջին տարիներում ուշադրութիւն էր գրաւում մի շատ համակրելի գործիչ, որ վախճանվեց անցեալ մարտ ամսի կէսում։ Դա Իվանովիչն է, որին լաւ պէտք է ճանաչեն եւ հայերը։ Հանգուցեալը, ինչպէս յայտնի է, վերջին տարիներս աշխատակցում էր գլխաւորապէս «Новое Обозрѣніе» լրագրում։ Այդտեղ էլ այժմ տպված է մի յօդուած, որ բնորոշում է համակրելի հրապարակախօսին։ Լրագիրը յիշատակում է, թէ ինչ էր այն ժամանակը, երբ հանգուցեալը սկսեց գրել։ Դա այն ժամանակն էր, երբ Թիֆլիսի մամուլի մէջ բոյն դրած մարդատեացները եւ հայակերները ոչ մի չափ ու սահման չէին ճանաչում իրանց արշաւանքների մէջ։ Հայ պլուտօկրատիայի (հարուստ դասակարգի) արատները հռչակվում էին հայոց ազգային արատներ. քարոզվում էր, թէ բոլոր հայերը նրանք են միայն, որոնք հարուստ են, որոնք իրանց շահերի համար կողոպտում են ազգաբնակութիւնը, ստրկացնում են նրան։ Հանգուցեալ Իվանովիչը, իբրեւ վաթսունական թւականների լաւագոյն գաղափարների աւանդապահ, իբրեւ լայն եւ մարդասէր սրտի տէր մարդ, չէր կարող չը վրդովվել այդ տմարդի արշաւանքներից։ Նա չէր կարող չը տեսնել, որ պլուտօկրատիան ոչ մի տեղ ազգային յատկութիւններ չէ ներկայացնում, որ կապիտալիստը—դա մի ընդհանուր, համաշխարհային տիպ է եւ եթէ պէտք է նրա դէմ կռուել, այդ կռիւը պիտի նոյնպէս լինի ընդհանուր, անկախ այն հանգամանքից, թէ ինչ ծագում ունի, որ ազգին է պատկանում պլուտօկրատիան։ Եւ Իվանովիչը կռիւ էր մղում մի կողմից հայակերների դէմ, միւս կողմից հէնց այն իսկ պլուտօկրատիայի դէմ, որ թէեւ ծագումով հայ էր, բայց հաւասար կերպով ճնշում, հարբստահարում էր ամենքին եւ գուցէ ամենից շատ հէնց հայերին։ «Մշակի» այս էջերում մենք շատ անգամ ենք քաղուածքներ բերել Իվանովիչի խելացի յօդուածներից. մեր ընթերցողները, ուրեմն, ծանօթ են նրա հետ։ Հանգուցեալ Իվանովիչը մի փայլուն երեւոյթ էր մեր կովկասեան մամուլի մէջ. ունենալով՝ գրական տաղանդ, յայտնի լինելով ռուսաց գրականութեան մէջ իր վիպական գրուածքներով, նա վերին աստիճանի համեստ գործիչ էր, լցված էր անչէջ հաւատով դէպի լաւագոյն ապագան, սիրում էր մարդուն եւ թշնամի էր այն բոլոր բռնութիւններին, անարդարութիւններին, որոնք մարդու իրաւունքներն են խախտում։ Նա իդէալի մարդ էր, այս բառի ամենալաւ նշանակութեամբ։ Համեստ էր նրա թաղումը։ Նրա դերեզմանի վրա փծուն ճառեր չարտասանվեցին, բայց դա, իհարկէ, չէ նշանակում, թէ կը մոռացվի այդ լաւ, բարի մարդու, առաքինի քաղաքացու եւ իդէալի տաղանդաւոր զինուորի գերեզմանը...

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Մարտի 25-ին

Ստիպված եմ արձանագրել մեր հոգեւորականների տգեղ արարքներից մի փաստ էլ։

Անցեալներում մեր քահանաներից մէկը իրան թոյլ է տալիս իր պաշտօնակատարութեան ժամանակ զեղծում գործել. Վ. Ա. երեխայի մկրտութեան խորհուրդը կատարելիս, նա յանկարծ գրաւոր հրաւէր է սանում մի հարուստի կողմից, որ չտապի իրանց տուն, որովհետեւ վախճանվում է հարուստի կինը։ Քահանան անմիջապէս ընդհատում է մկրտութեան արարողութիւնը եւ մանկանը յանձնելով մանկաբարձուհուն եւ կնքահօրը՝ յայտնում է, թէ խորհրդի շարունակութիւնը կը կատարէ տանը, երեկոյեան, ապա անմիջապէս նստելով կառք՝ շտապում է հրաւիրատեղին։ Նոյն օրվայ գիշերը, ինչպէս պատմեց մեզ մանկաբարձուհին, քահանան խորհրդի մնացած մասը կատարում է տանը։ Անհաւատալի է թւում քահանայի կողմից այդպիսի մի վարմունք, չէ, ընթերցող. բայց լսեցէք, աչքալոյս եմ տալիս ձեզ եւ հոգեւոր բարձր իշխանութեան մեր հոգեւորականներից մէկի մի նոր եւ չնաչխարհիկ վարմունքի համար։—Այսօր, կիրակի, ամսոյ 25-ին, Ծաղկազարդի օրը, իմ ծխատէր Մ. քահ. Հ—եանց եւ իր իշխանաւոր Սիօն վարդապետ բարեհաճում են մկրտութիւն ընդունելու համար եկեղեցի տարված իմ ուրթորեայ մանկանը մերժել ս. խորհուրդը եւ մանկաբարձուհու ու կնքահօր հետ միասին դուրս վռնդել եկեղեցուց պատաւոր կերպով։ Վերադառնում են եկեղեցուց կնքահայրը եւ մանկաբարձուհին եւ յայտնում տեղի ունեցած իրողութեան մասին վրդովված։ Ես անմիջապէս պ. Հ—ի հետ դիմում եմ Սիօն վարդապետին եւ բացատրութիւն պահանջում իր վարմունքի համար։

—«Ճիշտ է, ես հրամայեցի քահանային չը մկրտել, պատասխանում է Սիօն վարդապետը, որովհետեւ առաւօտեան նոյն քահանան արդէն կատարել էր մի մկրտութիւն (Ղ. Ս—ի որդուն), ուստի երկրորդ մկրտութիւն կատարել նոյն օրում չէր կարելի եւ ես բարկացայ քահանայի վրա, որ մինչեւ այժմ չէ հասկացել իր պարտականութիւնը»...

Իմ հարցին՝ արդեօք եկեղեցական հաստատված օրէնք է, որ մի օրվայ մէջ չէ կարելի երկու մկրտութիւն կատարել, նա պատասխանում է.—«Ոչ, օրէնք չէ, այլ սովորութիւն է եւ հնագոյն սովորութիւն. բայց ցաւելով պէտք է ասեմ, որ շատ տեղ (ուրեմն կան տեղեր, ուր այդ սովորութիւնը գործադրվում է, նկատեցէք) մոռացութեան է տուած, եւ ես պարտքս եմ համարում այդ սովորութիւնը մտցնել իմ վիճակում, ձեզնից էլ յատկապէս ներողութիւն եմ խնդրում, որ փորձը առաջին անգամ ձեզ վրա է կատարվում. յոյս ունեմ, որ չէք վշտանայ ու աւելի ուրախ կը լինէք այդ գեղեցիկ սովորութեան տարածվելու համար առաջին փորձը ձեզ վրա կատարված լինելու համար»...

Մեր երկար խօսակցութեան ընթացքում Սիօն վարդապետի տուած անմիտ պատասխանների եւ բացատրութիւնների երկար շարքից մէկը առաջ բերելով՝ բաւական եմ համարում նրա ով եւ ինչ լինելը ցոյց տալու համար։ Երկամեայ պաշտօնավարութեան ընթացքում նա իր վարք ու բարքով եւ վարմունքներով արդէն ժողովրդի կատարեալ զզուանքն է յարուցել դէպի ինքը։

Հրաւիրում եմ եւ հոգեւոր բարձր իշխանու-

թեան ուշադրութիւնը Սիօն վարդապետի վարմունքի եւ արձակած հրամանի վրա, որով նա կամենում է եկեղեցական խորհրդակատարութեան մէջ նորաձեւութիւն (կամ ինչպէս ինքը վկայեց—մոռացված հին սովորութիւն) մտցնել։

Ա. Մէլիք-Բաբախանեան

ՆԱՄԱԿ ՋԻԱՏՈՒՐԻԻՑ

—

Մարտի 27-ին

Մօտաւորապէս 18—20 տարի է, ինչ մարգանեց հանքը արտահանվում է այստեղից։ Մարգանեցի արտահանութիւնը բաւական զարգացել է։ Սկզբի տարիները քիչ էր արտահանվում, իսկ վերջը հետզհետէ աւելանալով, անցեալ տարի հասաւ մինչեւ 30—35 միլիոն պուդի։ 18—20 տարվայ ընթացքում մարգանեցի արտահանութիւնը ունեցել է իր փայլուն եւ վատ ժամանակները. շատերը հարստացան, շատերը իրանց ապրուստը ապահովացրին։ Բայց խեղճ մշակը մնաց էլի մի եւ նոյնը. նա ոչ միայն ապահով ապրուստի չարժանացաւ, այլ եւ բարեկարգված, քիչ թեթեւացած աշխատանքի էլ չարժանացաւ...։

Հանքերում աշխատող մշակը, սկսած լուսաբացից մինչեւ երեկոյ, աշխատում է նաւթի կանթեղի լոյսով, որի խեղդող ծուխը թունաւորում է նրան։ Մշակը զրկված է ընութեան լոյսից, զրկված է մաքուր օդից, իսկ երեկոները, գոնէ իր բազմատանջ ոսկորները հանգըստացնելու համար, չունի կանոնաւոր սենեակ։ Նրա հանգստարանն է փայտեայ կամ քարից շինված խղճուկ մի նկուղ, որը, բացի սենեակից, ամեն բանի նմանէ, մանաւանդ ձմեռ ժամանակ։ Մշակը, շատ անգամ չը դիմանալով ցրտին, գերադասում է հանքերի մէջ քնել (հանքերում ձմեռը տաք է լինում, իսկ ամառը զով), քան այն նկուղներում, որոնք յատկացրած են մշակների համար։

Շատ անգամ պատահում է եւ այսպէս. հանքում մշակի աշխատելու ժամանակ, պոկվում է ժայռից մի քարի կտոր եւ ընկնելով մշակի վրա՝ կամ գլուխն է ջարդում, կամ մարմնի մի մասը վիրաւորում եւ կամ վերջ է տալիս նրա բազմաչարչար կեանքին, թողնելով ընտանիքը անել դրութեան մէջ։ Այսպիսի դէպքերում լեռնային երկրաչափը պարտական է հանքատիրոջ կամ պատասխանատու անձնաւորութեան վրա արձանագրութիւն կազմել եւ յանձնել դատարանին, իսկ դատարանը, օրէնքի հիման վրա, պատժում է մեղաւորին։ Բայց, դժբաղդաբար, այսպիսի դէպքերը շատ անգամ մինչեւ դատարան չեն հասնում եւ հանքատէրը կամ պատասխանատու անձնաւորութիւնը անմիջապէս վազում է դժբաղդ մշակի ընտանիքի մօտ, համոզում է նրան ճարպիկ խօսքերով, թէ անօգուտ է դատարանին դիմել, տալիս է մի քանի տասնեակ բուբլի եւ դրանով ազատվում է սպառնացող պատժից։ Եւ ինչ էք կարծում, այսքան տաժանակիր աշխատանքներին կեանքը վըտանգի ենթարկած մշակը մի քառակուսի սաժէն մաքրած, դուրս բերած, դարսած մարգանեցի համար ստանում է 30—35 ր., որը մի մշակ հազիւ կարողանում է պատրաստել 30 օրվայ մէջ, իսկ երբեմն էլ աւելի։

Ահա այս է այստեղի մշակների դրութիւնը։ Ցանկալի է, որ հանքագործները աւելի խղճով վերաբերվէին մշակներին, տային յարմարութիւններ եւ ուշադրութիւն դարձնէին հանքերը ամրացնելու գերաններով, որպէս զի դժբաղդ դէպքեր ստէպ չը պատահեն։ Իսկ լեռնային երկրաչափները պէտք է խիստ հսկեն, որ հանքերում պատահած մահվան դէպքերը չը ծածկվեն մի քանի տասնեակ բուբլիների գնով եւ վնասված մշակը ստանայ արդար վարձատրութիւն։

Ե. Փ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մօզդոկ, մարտի 23 ին

«Մշակ» լրագրի 56-րդ համարում, «Ակ» կեղծանուն տակ, Մօզդոկի նամակագիրը գրում է, իբր թէ իմ եղբայրը, Գէորգ Նազարեան, պարտ լինելով Յարութիւն Խոսրովեանին 1000 բուբլի եւ չը կամենալով հատուցանել իր պարտքը, վրէժխնդրութիւնից ստիպված, սպանել է նրան։ Մի կողմ թողած այն, որ փոքր ի շատէ պարտաճանաչ մարդը երբէք թոյլ չի տայ իրան սպանել իր պարտատիրոջը, որովհետեւ եթէ այդպէս լինէր, ամբողջ աշխարհը պատերազմի վայր կը դառնար, ես կամենում եմ միայն վերականգնել բօպէական յուզմունքին զոհ գնացած եղբօրս պատիւը եւ մասնացոյց անել լրատուի արած սխալների վրա։

Ահա գործի ճիշդ պատմութիւնը։ Իմ փեսան, հանգուցեալ Գաբրիէլ Թուշմալեան, այստեղի ս. Աստուածածնի եկեղեցում երէցփոխի պաշտօն վարելու ժամանակ, գրաւ դրած է եղել եկեղեցապատկան տոմսերը։ Նրա մահից յետոյ հաշիւ ընդունող ծիսականները առաջարկում են նրա եղբայրներին, պ.պ. Միքայէլ եւ Աւետիս Թուշմալեաններին, որոնք արդէն տիրացել էին Գաբրիէլի կայքին, ընդունել պակասած 6,000 ր. պարտքը, որ եւ նրանք յանձն են առնում, բայց իբր թէ փող չունենալու պատճառով՝ 4,000 ր. պարտք են վերցնում Խոսրովեանից, իսկ մնացած 2,000 ր. ճարում են ուրիշ տեղից։ Հանգուցեալ Խոսրովեան համաձայնվում է տալ այդ փողն այն պայմանով, որ բացի իր փեսայ Միքայէլ Թուշմալեանից, ստորագրէ մուրհակի տակ եւ Գէորգ Նազարեան։ Եղբայրս ճարահատեալ ստորագրում է մուրհակի տակ, նախապէս ստորագրութիւն վերցնելով Թուշմալեաններից, որ նրանք, պարտքը պահանջելու դէպքում, իրանք հատուցանեն պարտքը։ Այդպիսով եկեղեցին ստացաւ իր փողը, իսկ Թուշմալեանների տուած ստորագրութիւնը կայ մինչեւ այսօր, իբրեւ ապահովութիւն։ Բայց այդ բոլորը եղել է ֆիկտիւ գործ։ Ահա թէ ինչպէս։ Փոխ-գնդապետը, մուրհակն իր գրպանը դնելուց յետոյ, 4,000 ր. պահանջում է եղբօրից, առարկելով իբր թէ իր փեսայ Միքայէլ Թուշմալեան փող չունի, մնանկանալու պատճառով։

Գործը երկար ժամանակ դատարանում ձգձգվելուց յետոյ, փոխ-գնդապետը, կատարողական թերթ հանելով, ցուցակագրել առաց եղբօրս 44 սաժէն փայտը, սպառնալով ապագայումն էլ ծախել տալ, ինչ որ ձեռքը կընկնի եղբօրս ունեցածից. այդ դեռ քիչ է։ Նա փայտը ծախելուց յետոյ պարծենալով չըվերջիս է եղել եւ շարունակ ասելիս. «я его оставлю безъ куска хлѣба». բացի դրանից անպատշաճ խօսքեր է ուղղել եղբօրս կնոջ հասցէին, ինչպէս հատատված է վկաներով։ Սպանութեան օրը Խոսրովեան, նստած լինելով իր տան առաջ եւ տեսնելով անցնող եղբօրս, ասել է հետեւեալ խօսքերը. «я тебя, выжиму». այդ եւս հատատված է վկաներով ու մտցրած է քննիչի կազմած արձանագրութեան մէջ։ Ահա այդտեղ եղբայրս, չը կարողանալով տանել այդ հրապարակական խայտառակութիւնը, յուսահատված վերջ է դնում իրան կեղեքողի կեանքին։ Գալով հանգուցեալի արժանաւորութիւններին, ես լռում եմ. դրա մասին թող խօսեն Մօզդոկի հասարակութեան այն ազնիւ անհատները, որոնց համար թանգ է ճշմարտութիւնը եւ որոնք գիտեն հանգուցեալի ինչ լինելը։

Գրիգոր Նազարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Նոր-Նախիջեւան, մարտի 25-ին

Առ 13 դեկտեմբերի 1900 թ. Գամառ-Քաթիպայի մահարձանի գումարն էր 2521 ր. 81 կ.։ Ստացանք՝ տոկոս 56 ր. 65 կ., պ. Ա. Գեանջեցեանից պ. Յ. Թումայեանի եւ ընկ. ծառայողներից հանգանակած—36 ր. 50 կ., Մ. Շորշորեանից եւ պ. Խաթրանեանից տաս-տասը բուբլի, պ. Ա. Յարութիւնեանից եւ Վ. Մելիքեանից 2 ր. 80 կ. ընդամենը՝ 115 ր. 95 կ.։ Ուրեմն ողջ գումարը առ 25 մարտի կը լինի մեր մօտ 2637 ր. 76 կ.։

Անմահ բանաստեղծի յիշատակը յարգողներից սպասում ենք դեռ նուէրներ՝ Нахичевань на Дону, Григорію Чалхушьяну։

Գր. Զալխուշեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» հետեւեալ համարը Աւետեաց տօնի պատճառով լոյս կը տեսնի կիրակի, ապրիլի 8-ին։

—

Մենք առիթ ունեցանք տեսնվել Օքսֆորդի համալսարանի պրոֆէսսոր Մարգոլիութ (Margoliouth) հետ, որ իր ամուսնու հետ միասին եկաւ եւ անցաւ Թիֆլիսով՝ Պարսկաստան գընալու նպատակով։ Պրոֆէսսորը պիտի ուղեւորվի Ուրմիա՝ անելու մի շարք ուսումնասիրութիւններ ասորիների պատմութեան եւ հին գրականութեան վերաբերութեամբ։ Նա սովորել է հայերէն կարդալ-գրել եւ փոքր ինչ խօսում է հայերէն, գեղեցիկ արտասանելով բառերը։ Ճանապարհորդութիւնը պէտք է տեւէ մօտաւորապէս երկու ամիս։

—

Երէկ, հինգշաբթի, ապրիլի 5-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում տեղի ունեցաւ Արեւելագիտութեան ընկերութեան Թիֆլիսի բաժնի բացումը։ Ժողովը բազմամարդ էր։ Մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդենք միւս անգամ։

—

Ապրիլի 3-ին, առաւօտեան 6 ժամին, զգացվեց երկրաշարժ Թիֆլիսում։ Երկրաշարժը անվնաս անցաւ։

—

Զատկի տօների ժամանակ Թիֆլիս հիւր եկած Բաւարական պրինցը իր ավիտայով ապրիլի 2-ին արտակարգ գնացքով ճանապարհ ընկաւ Բաթում։ Պրինցին ուղեկցող ճանապարհորդները նոյնպէս գնացին Թիֆլիսից։

—

Նորերս Թիֆլիսում վախճանվեց յայտնի հարուստ Կ. Զուբալով, որի թաղումը տեղի ունեցաւ ապրիլի 3-ին։ Հանգուցեալի ժառանգները 100 հազար բուբլի նուիրեցին ժողովրդական տան կառուցման համար։

—

Թերեւ գեղը, որ իր աւերիչ գործողութեամբ հաւասարեա ամեն տարի ահագին վնասներ է հասցնում ազգաբնակութեանը (1900 թ-ին վնասների գումարը հասաւ 400 հազար բուբլու), դրդեց երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութեան մի յատուկ յանձնաժողով կազմել՝ ժշկելու համար արքունական միջոցներ տեղական ազգաբնակութիւնը պաշտպանելու համար այն աւերմունքներից, որ պատճառում է այդ գեղը։

—

«Русск. Вѣд.» լրագրի մէջ կարդում ենք. «Պետերբուրգի հայ ուսանող երիտասարդութեան խմբի մէջ միտք ծագեց յարգել հանգուցեալ Գրիգոր Զանչեանի յիշատակը հրատարակելով գեղարուեստական-գրականական ժողովածու։ Թանգագին հրապարակախօսի եւ հասարակական գործիչի պայծառ, մարդասէր անձնաւորութիւնը երաշխաւորում է ձեռնարկողներին, որ մտադրված գործը աջողութիւն կը գտնի. կարծիք չը կայ, որ գրողները, նկարիչները, գիտնականները, որոնց չէր կարող համակրելի չը լինել արդարութեան եւ մարդասիրութեան համար հանգուցեալ մարտնչողի ամբողջ գործունէութիւնը, արձագանք կը տան նախաձեռնողների խնդիրքին, կը մասնակցեն այդ ժողովածուի մէջ եւ դրանով արժանի կը դարձնեն ժողովածուն ողբացեալ Գրիգոր Զանչեանի յիշատակին. մանաւանդ որ հրատարակութիւնը լինելու է Զանչեանի անուան հետ կապ ունեցող մի բարեգործական հաստատութեան օգտին։ Ժողովածուն բաղկացած կը լինի երկու մասից. առաջինը կը պարունակէ յօդուածներ Զանչեանի, իբրեւ մեծ բէֆորմերի շրջանի պատմագրի, իբրեւ, բառի ընդարձակ նշանակութեամբ, գրողի եւ հրապարակախօսի, եւ իբրեւ հասարակական գործչի ու մարդասէրի կեանքի եւ գործունէութեան մասին։ Այդ բաժինը հնարաւորին չափ լիակատար անելու համար շատ ցանկալի է, որ Գրիգոր Զանչեանին մօտից ճանաչող անձինք հաղորդէին ուսումնասիրող հասարակութեան իրանց անձնական յիշողութիւնները Զանչեանի մանկական եւ պատանեկական տարիքների, նրա հրապարակախօսական եւ հասարակական գործունէութեան շրջանի մասին, ուղարկելով այնպիսի յօդուածներ ժողովածուի խմբագրութեանը, որոնք բնորոշէին Զանչեանի մարդասէր անձնաւորութիւնը իրանց նրա հետ ունեցած խօսակցութիւններից ստացած տպաւորութիւններով եւ այլն։ Շատերի մօտ կարելի է գտնվեն Զանչեանից ստացված հետաքրքրական նամակներ, որոնք, վերաբերվելով նրա գործունէութեան այս կամ այն շրջանին, կարող են բնորոշել նրա անձնաւորութիւնը եւ շահագրգռական լինել հասարակական տեսակէտից։ Խմբագրական ժանաժողովը խնդրում է այդ տեսակ հետաքրքրութիւն ներկայացնող հում նիւթ ունեցող անձանց՝ ուղարկել այդ նիւթը խմբագրութեան. բոլոր նամակները եւ ուրիշ թղթերը, պատճէն վերցնելուց յետոյ, յետ կուղարկվեն տէրերին։ Ժանաժողովը շատ շնորհակալ կը լինի, եթէ ուղարկեն Զանչեանի լուսանկարները թէ առանձին քաշված եւ թէ խմբի մէջ։ Կարելի է կատարեալ վստահութեամբ նախօրօք ասել, որ շատերը կը ցանկանան յօդուածներ գրել Զանչեանի կեանքի եւ գործունէութեան մասին. բայց որպէս զի մի եւ նոյն նիւթի մասին մի քանի յօդուածներ չը գրվեն, ու ընդհակառակը, հանգուցեալի կեանքի մի քանի կողմերը աչքաթող չանվեն, հրատարակչական եւ խմբագրական ժանաժողովը խնդրում է այն անձանց, որոնք կուզեն յօդուած գրել ժողովածուի համար, նախապէս յայտնել մասնաժողովին, թէ յօդուած են գրելու այս ինչ բովանդակութեամբ, որպէս զի մասնաժողովը նկատի առնի այդ։ Երկրորդ մասը կը պարունակէ բանաստեղծական, վիպական եւ հրապարակախօսական գրուածքներ եւ յօդուածներ երաժշտութեան, նկարչութեան, քանդակագործութեան ու ճարտարապետութեան մասին, եւ հարուստ կերպով զարդարված կը լինի այդ յօդուածներում յիշվող գեղարուեստական գործերի նկարներով։ Պատկերներ կը լինեն նաւ բնագրից դուրս։ Առանձնապէս ցանկալի է ստանալ հնադարեան Արեւելքի գեղարուեստի վերաբերեալ շարադրութիւններ։ Ժողովածուն մտադրութիւն կայ անուանել «Գեղարուեստական-գրականական ժողովածու Զանչեանի յիշատակին»։ Ժողովածուի ընդհանուր խմբագրութիւնը սիրալիր կերպով համաձայնել է ստանձնել ռուս գրող Պեսոր Իսաեվիչ Վէյնբէրգ։ Յօդուածներ կընդունվեն մինչեւ այս տարվայ սեպտեմբեր ամիսը. իսկ եթէ որ եւ է յօդուած մինչեւ այդ ժամանակ չէ կարող պատրաստ լինել, թող հեղինակը բարեհաճի յայտնել այդ բանը մասնաժողովին, որպէս զի նա կարողանայ ձեռք առնել բոլոր հնարաւոր միջոցները յօդուածը ժողովածուի մէջ զետեղելու տպագրութիւնը սկսվելուց յետոյ։ Մասնաժողովը խնդրում է ժողովածուին վերաբերեալ բոլոր նամակները, յօդուածները, նկարները, լուսանկարները, եւ այլն ուղարկել իրան հետեւեալ հասցէով՝ Петербургъ, Колокольная улица. домъ № 9, квартира № 7, Іоакиму Лазаревичу Бедельяну. բոլոր պօստային ծախսերը մասնաժողովը, ի հարկէ, վերցնում է իր վրա։

—

Մտադրութիւն կայ, Պետերբուրգի լրագիրների խօսքով, հիմնել ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնականի էլի մէկ պաշտօն, այնպէս որ մինիստրի օգնականների մէջ պարտաւորութիւնները հետեւեալ կերպով կը բաժանվեն՝ մէկը նրանցից յատկապէս կը հսկէ ուսումնական մասի վրա, իսկ միւսը՝ վարչական մասի վրա։

—

Զինուորական-բժշկական ակադէմիայի ուսանողների քննութիւնները կը կատարվեն մայիսի 1-ից մինչեւ յունիսի 1-ը. կոնֆերէնցիայի վճռի համաձայն՝ մինչեւ ապրիլի 25-ը կը շարունակվի դասախօսութիւնների ընթերցումը։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ մտադրութիւն կայ առանց բացառութեան բոլոր միջնակարգ եւ բարձրագոյն մասնագիտական դպրոցները, որոնք գտնվում են զանազան մինիստրութիւնների վարչութեան տակ, յանձնել ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան վարչութեանը։

—

Սիբիրի երկաթուղին կառուցանելու ծախս 1901 թի համար հաշված է 10,137,985 բուբլի։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մեծ պասի հետ վերջացաւ եւ քարոզների սեզոնը։ Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեան իր Շուշի մտած օրից շարունակ քարոզներ էր խօսում, իսկ մեծ պասին խօսած քարոզները իրանց պարզ ոճով ու լեզուով մատչելի էին ժողովրդին։ Զարմանալի է թէ ինչու քարոզները միայն մեծ պասին են աւելի ընդունված, մինթէ տարվայ միւս ժամանակներին չէ կարելի եկեղեցու բեմից քարոզել ժողովրդին. սակայն անտարբերութիւնը մեզանից է, որ տարվայ միւս ժամանակները եկեղեցու երես չենք տեսնում. ինչ են անում շուշեցիք եկեղեցին—կայ Թօփխանա, կայ կլուբ, կայ միմեանց բամբասել, միմեանց դրպարտել, հերիք է։ Այս բոպէին դրանց մէջն է շուշեցու աստուածպաշտութիւնը»։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մայիսի 1-ին սպասվում է այստեղ Երեւանից քանդակագործ Անդրէաս Տէր-Մարուքեանը, որին Գ. Զալխուշեանը յանձնել է պատրաստել Ռաֆայէլ Պատկանեանի կիսարձանի կաղապարը (модель)։ Եթէ կաղապարը ընդունվի, Տէր-Մարուքեանը 1800 բուբլով պիտի պատրաստէ այդ կիսարձանը արոյրից։ Օգոստոսի 22-ին մեր մեծ բանաստեղծի մահվան տարեդարձն է եւ ցանկալի էր, որ այդ իսկ տարեդարձին պատրաստ լինէր մահարձանը։ Վեհափառը անկարող եղաւ թոյլատրել տեղափոխել հանգուցեալի մարմինը Էջմիածին, այնպէս որ մահարձանը կը դրվի ս. Խաչ վանքում, եկեղեցու մօտ»։

—

ՍԱԼԻԱՆԻ «Բանկ» ձկնորսարանից մեզ գրում են. «Մարտի 20-ին մի դժբաղդ դէպքի զոհ գնացին երկու պարսիկ մշակներ։ 6 մշակ, նաւակով Կուր գետի լայնութեամբ ուռկանը գցելու ժամանակ, ընդհարվում են «Սալիանեց» նաւի հետ, որ Բագուից դէպի Սալիան էր գնում։ Նաւակը ջարդվում է եւ այդ 6 հոգին թափվում են ջուրը, որոնցից 4 հոգի կարողանում են լողալով բարձրանալ նաւը, իսկ երկուսը խեղդվում են։ Գուցէ այս իրողութիւնը առիթ դառնայ ստիպելու նաւապետներին զգոյշ լինել Կուր գետի վրա նաւագնա-

ցութեան ժամանակ, որովհետեւ գետի ամբողջ երեսը մինչեւ Սալիան ուռկաններով եւ ձրկնորսական նաւակներով ծածկված է եւ ամեն րոպէ կարող են պատահել այդպիսի դժբաղդութիւններ»։

—

ԱԽՏԻՐԿԱՑԻՑ մեզ գրում են. «Մարտի 13-ին այստեղ եկաւ Խարկովի Բարկէն վարդապետը եւ մի օրվայ միջոցում խոստովանեցրեց եւ հաղորդեց հայ զինուորներին, թւով 41 հոգի։ Վարդապետը մի աղքատ քարոզով քաջալերեց զինուորներին՝ անկեղծ ծառայել հայրենիքին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Daily Telegraph» լրագրի Բերլինի թղթակիցը հաղորդում է, որ Ցանարդէլլի հաւատացրեց կոմս Բիւլովին, թէ Իտալիան ամենեւին մտադրութիւն չունի հրաժարվել երեքպետեան դաշնակցութեան անդամութիւնից։ Նա իբր թէ ասել է նոյնպէս, որ Իտալիայում չի գտնվի ոչ մի պետական անձն, որ չը զգար երեքպետեան դաշնակցութեան անհրաժեշտութիւնը Իտալիայի շահերի տեսակէտից։ Բիւլով պատասխանել է Ցանարդէլլիին, թէ Գերմանիան իր կողմից ամենալաւ զգացմունքներ է տածում դէպի Իտալիան եւ դէպի նրա առեւտրական շահերը։

—Բերլինից հեռագրում են «Новости» լրագրին, թէ «Բրիստոլ» հիւրանոցի մօտ կառավարութեան կարգադրութեամբ կանգնեցրած են ոստիկանական պահապաններ՝ արգելելու համար այն թշնամական ցոյցերը, որ Բերլինի ազգաբնակութիւնը փորձում էր կազմել անգլիական արտակարգ դեսպանութեան դէմ, որ եկել էր պաշտօնապէս հաղորդելու գերմանական արքունիքին Էդուարդ VII-ի գահակալութեան լուրը։

—Կ. Պոլսի հայոց լրագիրները հաղորդում են, որ նորերս վախճանվեց Թիւրքաց հայերի մէջ յայտնի գործիչ Ստեփան Օսկան, որը 30 տարուց աւելի Զմիւռնիայում հրատարակում էր ֆրանսերէն «La Réforme» լրագիրը։ Օսկանը իր ուսումն աւարտեց Սորբոնի համալսարանում Ժիւլ Սիմոնի հետ միասին։ Նա մասնակցեց 1848 թւի ֆրանսիական յեղափոխութեանը եւ ծանր կերպով վիրաւորվեց։ Յեղափոխութիւնից յետոյ Օսկանը, Մաձձինիի յանձնարարականով, յանձն առաւ Կավուրի զաւակների դաստիարակի պաշտօնը, որի մօտ նա ապրեց երկու տարի։ Ապա նա հրաւիրվեց իր հայրենակիցների կողմից Զմիւռնիա եւ նշանակվեց Մեսրոպեան դպրոցի վերատեսուչ։ Մինչեւ իր կեանքի վերջը Օսկանը յարաբերութիւններ էր պահպանում իր նախկին ընկերակիցների հետ Ֆրանսիայում։ Նա ջերմ կերպով սիրում էր Ֆրանսիան։

—«Սարահ» լրագրի խօսքով, բողոքական միսիոնէրները միջնորդում էին Թիւրքաց կառավարութեան առաջ Տրապիզօնում արական դպրոց բանալու մասին, բայց Բ. Դուռը առանց հետեւանքի թողեց նրանց խնդիրքը։ Լրագիրն ասում է. «Շատ ցաւալի է, որ կառավարութիւնը այդպէս ուշ ժամանց սահման դնել օտար միսիոնէրների գործունէութեանը։ Եթէ որ հէնց սկզբից նրանց արգելվէր մուտ գործել Թիւրքաց կայսրութիւնը, կառավարութիւնը ազատված կը լինէր այն գլխացաւանքից, որ վերջին քսանհինգ տարիների ընթացքում պատճառեցին նրան քրիստոնեայ հպատակները։ «Սանձարձակ սերունդներ» նախապատրաստելով բոլգարներից, հայերից եւ ուրիշ քրիստոնեաներից, միսիոնէրները կամաց-կամաց պատրաստում էին Թիւրքիայի անհաշտ թշնամիներ եւ զանազան ազգութիւններին պատկանող այսպէս անուանված «լուսաւորված հայրենասէրներ»։ Ահա այդ «հայրենասէրներն» էին գլուխ կանգնում բոլգարների եւ հայերի ապստամբութիւնների նման հակակառավարական շարժումներին։ Առաջինները, դժբախտաբար, հասան իրանց նպատակին, առաջացնելով վերջին ռուս-Թիւրքական պատերազմը, իսկ վերջինները ճակատները պատին խփեցին։ Միսիոնէրները իրանց «կրթական գործունէութեամբ» մեզ այնքան ճնաս են տուել, որ վաղուց ժամանակ է ասել այդ անկոչ հիւրերին՝ «կորէք»։

—«Արեւելք» լրագրին գրում են Վանից, որ կառավարութիւնը այնտեղ բացեց իգական արհեստագիտական դպրոց մահմեդական եւ քրիստոնեայ աղջիկների համար։ Աղջիկների գլխաւոր պարապմունքը լինելու է գորգագործութիւն։ Գորգագործութեան վարպետուհիներ նշանակված են փորձառու հայուհիներ լաւ ռոճկով։ Դպրոցի բացումը հանդիսաւոր էր։ Ներկայ էին հանդէսին վալին, ռուսաց եւ անգլիական փոխ-հիւպատոսները, մահմեդական եւ քրիստոնեայ հոգեւորականութեան ներկայացուցիչները եւ պատուաւոր քաղաքացիներ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

1 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրամանով Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուներսը մինչեւ Սալիան ուռկանների եւ ձրկնորսական նաւակներով ծածկված է եւ ամեն րոպէ կարող են պատահել այդպիսի դժբաղդութիւններ»։

—

ԱԽՏԻՐԿԱՑԻՑ մեզ գրում են. «Մարտի 13-ին այստեղ եկաւ Խարկովի Բարկէն վարդապետը եւ մի օրվայ միջոցում խոստովանեցրեց եւ հաղորդեց հայ զինուորներին, թւով 41 հոգի։ Վարդապետը մի աղքատ քարոզով քաջալերեց զինուորներին՝ անկեղծ ծառայել հայրենիքին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Daily Telegraph» լրագրի Բերլինի թղթակիցը հաղորդում է, որ Ցանարդէլլի հաւատացրեց կոմս Բիւլովին, թէ Իտալիան ամենեւին մտադրութիւն չունի հրաժարվել երեքպետեան դաշնակցութեան անդամութիւնից։ Նա իբր թէ ասել է նոյնպէս, որ Իտալիայում չի գտնվի ոչ մի պետական անձն, որ չը զգար երեքպետեան դաշնակցութեան անհրաժեշտութիւնը Իտալիայի շահերի տեսակէտից։ Բիւլով պատասխանել է Ցանարդէլլիին, թէ Գերմանիան իր կողմից ամենալաւ զգացմունքներ է տածում դէպի Իտալիան եւ դէպի նրա առեւտրական շահերը։

—Բերլինից հեռագրում են «Новости» լրագրին, թէ «Բրիստոլ» հիւրանոցի մօտ կառավարութեան կարգադրութեամբ կանգնեցրած են ոստիկանական պահապաններ՝ արգելելու համար այն թշնամական ցոյցերը, որ Բերլինի ազգաբնակութիւնը փորձում էր կազմել անգլիական արտակարգ դեսպանութեան դէմ, որ եկել էր պաշտօնապէս հաղորդելու գերմանական արքունիքին Էդուարդ VII-ի գահակալութեան լուրը։

—Կ. Պոլսի հայոց լրագիրները հաղորդում են, որ նորերս վախճանվեց Թիւրքաց հայերի մէջ յայտնի գործիչ Ստեփան Օսկան, որը 30 տարուց աւելի Զմիւռնիայում հրատարակում էր ֆրանսերէն «La Réforme» լրագիրը։ Օսկանը իր ուսումն աւարտեց Սորբոնի համալսարանում Ժիւլ Սիմոնի հետ միասին։ Նա մասնակցեց 1848 թւի ֆրանսիական յեղափոխութեանը եւ ծանր կերպով վիրաւորվեց։ Յեղափոխութիւնից յետոյ Օսկանը, Մաձձինիի յանձնարարականով, յանձն առաւ Կավուրի զաւակների դաստիարակի պաշտօնը, որի մօտ նա ապրեց երկու տարի։ Ապա նա հրաւիրվեց իր հայրենակիցների կողմից Զմիւռնիա եւ նշանակվեց Մեսրոպեան դպրոցի վերատեսուչ։ Մինչեւ իր կեանքի վերջը Օսկանը յարաբերութիւններ էր պահպանում իր նախկին ընկերակիցների հետ Ֆրանսիայում։ Նա ջերմ կերպով սիրում էր Ֆրանսիան։

—«Սարահ» լրագրի խօսքով, բողոքական միսիոնէրները միջնորդում էին Թիւրքաց կառավարութեան առաջ Տրապիզօնում արական դպրոց բանալու մասին, բայց Բ. Դուռը առանց հետեւանքի թողեց նրանց խնդիրքը։ Լրագիրն ասում է. «Շատ ցաւալի է, որ կառավարութիւնը այդպէս ուշ ժամանց սահման դնել օտար միսիոնէրների գործունէութեանը։ Եթէ որ հէնց սկզբից նրանց արգելվէր մուտ գործել Թիւրքաց կայսրութիւնը, կառավարութիւնը ազատված կը լինէր այն գլխացաւանքից, որ վերջին քսանհինգ տարիների ընթացքում պատճառեցին նրան քրիստոնեայ հպատակները։ «Սանձարձակ սերունդներ» նախապատրաստելով բոլգարներից, հայերից եւ ուրիշ քրիստոնեաներից, միսիոնէրները կամաց-կամաց պատրաստում էին Թիւրքիայի անհաշտ թշնամիներ եւ զանազան ազգութիւններին պատկանող այսպէս անուանված «լուսաւորված հայրենասէրներ»։ Ահա այդ «հայրենասէրներն» էին գլուխ կանգնում բոլգարների եւ հայերի ապստամբութիւնների նման հակակառավարական շարժումներին։ Առաջինները, դժբախտաբար, հասան իրանց նպատակին, առաջացնելով վերջին ռուս-Թիւրքական պատերազմը, իսկ վերջինները ճակատները պատին խփեցին։ Միսիոնէրները իրանց «կրթական գործունէութեամբ» մեզ այնքան ճնաս են տուել, որ վաղուց ժամանակ է ասել այդ անկոչ հիւրերին՝ «կորէք»։

—«Արեւելք» լրագրին գրում են Վանից, որ կառավարութիւնը այնտեղ բացեց իգական արհեստագիտական դպրոց մահմեդական եւ քրիստոնեայ աղջիկների համար։ Աղջիկների գլխաւոր պարապմունքը լինելու է գորգագործութիւն։ Գորգագործութեան վարպետուհիներ նշանակված են փորձառու հայուհիներ լաւ ռոճկով։ Դպրոցի բացումը հանդիսաւոր էր։ Ներկայ էին հանդէսին վալին, ռուսաց եւ անգլիական փոխ-հիւպատոսները, մահմեդական եւ քրիստոնեայ հոգեւորականութեան ներկայացուցիչները եւ պատուաւոր քաղաքացիներ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

1 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրամանով Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձու Եանօվսկի նշանակվում է պետական խորհրդի անդամ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կառավարչական հաղորդագրութիւն։ Ի. Սկսած անցեալ յունվար ամսի երկրորդ կէսից զանազան մինիստրութիւնների բարձրագոյն դպրոցների մեծամասնութեան մէջ տեղի ունեցան զանազան ժամանակներում ուսանողական անկարգութիւններ, որոնց հետեւանքն եղաւ ուսումնական պարապմունքների դադարեցումն այդ դպրոցներում զատկական տօներից առաջ։ Պարապմունքների այս դադարեցումն, որ արգելք հանդիսացաւ նրանց սովորական լրմանը, ստեղծեց այնպիսի դրութիւն, որի պատճառով ուսանողները հարկադրված պէտք է լինեն կամ կորցնել մի ուսումնական տարի կամ մինչեւ անդամ մի քանի դէպքերում, չնորհիւ այժմ գործող կանոնների, թողնել դպրոցը։ Այսպիսի հետեւանքները պէտք է ծանր ազդեցութիւն գործեն ուսանողների վիճակի վրա, իսկ նրանցից շատերի համար, նրանց անձնական եւ ընտանեկան դրութեան պատճառով, կը լինեն մի իսկական դժբաղդութիւն։ Բարձրագոյն բարեհաճութեամբ եւ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի նախագահութեամբ կազմված խորհրդակցութիւնը այն մինիստրութիւնների ներկայացուցիչներից, որոնց վարչութեան տակ կան բարձրագոյն դպրոցներ, անհրաժեշտ համարեց, յիշեալ դրպրոցներում ուսումնական կեանքի կանոնաւոր ընթացքը վերականգնելու համար, ձեռք առնել հետեւեալ միջոցները.—1) ապրիլ ամսի ընթացքում բարձրագոյն դպրոցներում վերսկսել ուսումնական պարապմունքները կամ թէ, ուսումնական վարչութեան կարգադրութեամբ, անմիջապէս ձեռնամուխ լինել կուրսից կուրս անցնելու եւ վերջնական քննութիւնների կատարման այն ժամանակամիջոցներում, որոնք սովորաբար ընդունված են քննութիւնների ցուցակներով. 2) եթէ ուսումնական պարապմունքները վերջացնելու եւ քննութիւններ կատարելու համար քիչ ժամանակ մնայ մինչեւ ամարային արձակուրդների սկիզբը, այն ժամանակ ուսումնական պարապմունքներն եւ քննութիւնները շարունակել եւ արձակուրդին յատկացրած ժամանակամիջոցում, թողնելով վարչութիւնների կամքին այս բանի համար միջոցներ որոշելու հարցը. 3) առանց յարգելի պատճառների քննութիւններին չեկողներին եւ քննութիւն չը բռնողներին ենթարկել այն բոլոր հետեւանքներին, որոնք ցոյց են տուած այս խնդրի վերաբերմամբ առանձին վարչութիւնների մէջ գործող կանոններով. 4) բարձրագոյն դպրոցներում, որպէս բացառութիւն, նշանակել այս տարվայ ընթացքում աշնանային քննութիւններ եւ վերաքննութիւններ յարգելի դէպքերում առանձին անձանց համար, համաձայն վերջիններիս խնդիրների եւ կարգադրութեան ուսումնական վարչութիւնների։

II. Բարձրագոյն հրամայված է, Սախալին կղզու վարչութիւնը եւ նրա պատժական հիմնարկութիւնները վերակազմելու հարցը չուտափոյթ կերպով լուծելու համար, կազմել արդարադատութեան մինիստրութեան մէջ, սենատոր Շմէլմանի նախագահութեամբ, մի առանձին յանձնաժողով արդարադատութեան մինիստրութեան եւ միւս մինիստրութիւնների պաշտօնեաներից, տալով նախագահին իրաւունք հրաւիրելու մասնաժողովի զբաղմունքների մասնակցութեան այնպիսի անձանց, որոնք իրանց գիտութեամբ եւ փորձառութեամբ կարող են օգտաւէտ աջակցութիւն ցոյց տալ մասնաժողովին։

ՀԱԱԳԱ։ Արտաքին գործերի մինիստրը, որպէս միջազգային միջնորդ դատարանի վարչական խորհրդի նախագահ, տեղեկութիւն տուեց բոլոր եւրոպական եւ արտաքոյ Եւրոպայի գտնվող պետութիւններին, թէ միջնորդ դատարանը կազմակերպված է. ձեւականապէս նրա բացումը տեղի չի ունենայ. միջնորդ դատարանի պայմանագրութիւնը դեռ եւս վաւերացրած չէ Զինաստանի, Լիւկսէմբուրգի, Մէկսիկայի եւ Թիւրքիայի կողմից։

ԼՕՆԴՕՆ։ Ինչպէս լսվում է, անգլիացիների վարձատրութեան պահանջների չափը Զինաստանից հաւասար է վեց միլիոն ֆունտ ստերլինգի։

ԲԵՐԼԻՆ։ Թագաժառանգը ուղեւորվեց Վիէննա։

Կ. ՊՕԼԻՍ։ Սուլթանը հրամայեց պատրիարքին թողնել պաշտօնը այն բանից յետոյ, երբ պարզվեց, որ պատրիարքը դանդաղում է կարդալ սինոդի որոշումն հաստատող իրադէն պատրիարքին պաշտօնից հրաժարեցնելու վերաբերմամբ։

2 ապրիլի

ՎԻԷՆՆԱ։ Գերմանական թագաժառանգը հասաւ Վիէննա. կայարանում նրան դիմաւորեցին կայսրը եւ էրցհերցոգները, որոնք ամենասրտագին կերպով ողջունեցին հիւրին։ Բազմաթիւ ժողովուրդ ողջունում էր թագաժառանգին ոգեւորված աղաղակներով։

ՏՈՒԼՕՆ։ Իտալական նաւատորմը ճանապարհ ընկաւ առաւօտեան ժամի 8-ին եւ 45 բօպէին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը ներկայացրեց պետութիւններին նոր առաջարկութիւններ այն վարձատրութեան վերաբերմամբ, որ պէտք է պահանջվի Զինաստանից։ Լուրերին նայելով, Միացեալ-Նահանգների կառավարութիւնը երբէկ պատուիրեց Պեկինի իր ներկայացուցիչներին, որ նրանք միանան վարձատրութեան պահանջներին միայն այն դէպքում, եթէ վարձատրութեան գումարը չի գերազանցի 200 միլիոն դոլլարից։ Այդ գումարը պէտք է հաւասարապէս բաժանվի բոլոր պետութիւնների մէջ եւ պէտք է վճարվի դրամով։ Եթէ պետութիւնները մերժեն ընդունել այդ առաջարկութիւնը, Ամերիկան կը դիմէ Հաագայի միջնորդ դատարանին։

ԱՆՏԻՊ։ Վալդէկ-Ռուսսոյի առողջութիւնը արագութեամբ բարւոքվում է. մինիստր-նախագահը ենթադրում է չորեքշաբթի օրը ուղեւորվել Գենուա։

3 ապրիլի

ԼՕՆԴՕՆ։ Լուր է տարածված, թէ բօէրները, չնորհիւ մառախուղի, գերի վերցրին գեներալ Ֆրէնչին եւ 500 անգլիացիների։ Պաշտօնական տեղերը այդ տեղեկութեան ճշդութեան դէմ առարկութիւններ են անում։

ՇԱՆԳՀԱԷ։ Ինչպէս հաղորդում են, բարձրատիճան մանդարինները տեղեկութիւն են ստացել Սիանֆուից, թէ չինական արքունիքը պատրաստութիւններ է տեսնում ուղեւորվելու Խսիանեան, որ գտնվում է Խուբէ նահանգում։ Այս տեղեկութիւնը հաստատվում է այն փաստով, որ մի մշական կազմ, բաղկացած վեց մինիստրներից, քիչ ժամանակ առաջ ճանապարհ ընկաւ Պէկինից Սիանֆու այն ենթադրութեամբ, թէ կընտրվի նոր մայրաքաղաք։ Պեկինի ժանդարմերիայի նոր կառավարիչ եւս գտնվում է Սիանֆուի ճարապարհին։

ՊԵԿԻՆ։ Չինական լիազօրներին հաղորդված է եապօնական ներկայացուցիչների կողմից, թէ կայսրի վերադառնալը Պեկին ահրաժեշտ է։

Կ. ՊՕԼԻՍ։ Սուլթանը պնդում էր այն բանի վրա, որ Դամադ-Մահմուդ փաշայի հետ միաժամանակ վերադառնան Կահիրէից եւ նրա երկու որդիքը, բայց նրանք հրաժարվեցին վերադառնալուց, եւ Դամադ-Մահմուդ փաշան գնում է միայնակ։ Որովհետեւ խէդիվը յայտնեց, թէ չէ կարող աջողեցնել, որ վերադառնան եւ Դամադի որդիքը, ուստի բանակցութիւնները այդ մասին սուլթանի եւ խէդիվի մէջ նորից ընդհատվեցին։

4 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բանտային գլխաւոր վարչութեան կառավարիչ սենատոր գաղտնի խորհրդական Մեչչանինովին հրամայված է լինել ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչեներ հաղորդում է Պրետորիայից. «Բարինգտոնի պատերազմական գործողութիւնների ժամանակ Բաուլինգտոն գընդապետի զօրասիւնը լուսադէմին յանկարծակի յարձակվեց Սմուլի վրա, Կլէրքդորպից դէպի հիւսիս-արեւմուտք։ Սպանված են 6 բօէրներ, վիրաւորված են 10, գերի են վերցրած 23։ Աւար առնվեցին մի հատ 12 ֆունտանոց թնդանօթ, մի հատ արագաձիգ թնդանօթ (ամբողջ), երկու սայլ ռազմամթերք, մի քանի ձի եւ քիչ տաւար։ Անգլիացիների կողմից երեքը վիրաւորվեցին։ Պլումէր գերի վերցրեց ֆէլդկօրնէտ Բրէլին եւ ուրիշ 16 բօէրների եւ գրաւեց 10 սայլ, 18 հրացան, ձիեր եւ տաւար»։

Օրանժեան հանրապետութեան մէջ Պիլչէրի գործողութիւնների ժամանակ սպանված են 7 բօէրներ, մինը անձնատուր եղաւ։ Գրաւված է բաւականաչափ մթերք։

ՊԵԿԻՆ։ Դեսպաններն այսօր խորհրդակցեցին ընդհանուր դրութեան եւ Վալդերզէէի զեկուցման մասին զինուորական ծրագիրների վերաբերմամբ։ Վերջնականապէս ոչինչ չը վճռվեց։ Եապօնիայի առաջարկութեանը չինական պալատը պատասխանեց, թէ կայսրին անկարելի է Պէկին վերադառնալ՝ քանի որ օտարազգիները երկրից չեն հեռացել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ապրիլի 4-ին, գեներալ-ծովապետ Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչի ներկայութեամբ, գիտութիւնների ակադէմիայի դահլիճներում տեղի ունեցաւ ծովային օֆիցէրների գեղարուեստական գործերի բարեգործական ցուցահանդէսի բացումը։ Ցուցահանդէսն այցելեց Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ։

ՊԷԿԻՆ։ Օտար պետութիւնների դեսպանները, նախընթաց օրը քննելով միաբան յայտագրի 12-դ յօդուածը ցզունգ-լի-եամէնի բարենորոգութեան վերաբերմամբ եւ դեսպանների ընդունելութեան ժամանակ եղած պալատական ծիսակատարութեան փոփոխութեան մասին, որոշեցին, Բօկգիլի եւ Կոմուրայի առաջարկութեան համաձայն, պահանջել, որ ցզունգ-լի-եամէնի փոխանակ հիմնվի արտաքին գործերի մինիստրութիւն, որ բաղկացած կը լինի մէկ պրինց—նախագահից եւ երկու մինիստրներից, որոնք պէտք է անմիջական մուտք ունենան կայսրի մօտ։ Ապա պէտք է նշանակվեն մինիստրի երկու օգնականներ, որոնցից մէկը պէտք է գիտենայ որ եւ է օտար լեզու։

ԿՐԱԴՕԿ։ Գէլբրօննից տեղեկութիւն է ստացված, որ Անդրիս Վէսէլին կենդանի է։ Վէսէլին իր ժամանակ ուղեկցում էր Մօրգենդալին, որպէս կօմիսար, եւ իբր թէ, ինչպէս այն ժամանակ հաղորդվում էր, Մօրգենդալի վիճակին էր ենթարկվել եւ Դէվէտի հրամանով իբր թէ հրացանի էր բռնվել։

ԲԵՐԼԻՆ։ Այսօր, կէսօրից յետոյ, ս. Միքայէլի կաթոլիկ եկեղեցում, երգեցողութեան կըրկնութեան ժամանակ, մինչեւ այժմ չը պարզված պատճառով, տեղի ունեցաւ պայթիւն. ձախ գմբէթի կամարը եւ տանիքը բոլորովին քանդվեցին. բոլոր պատուհանները եւ օրգանի ետեւի մասը ջարդուփշուր եղան։ Երկու տղայ եւ մէկ զինուոր ծանր կերպով վիրաւորվեցին։

ՄՕՍԿՎԱ։ Ապրիլի 4-ին բացվեց կրիմինալիստների միջազգային դաշնակցութեան ռուսական խմբի անդամների առաջին համաժողովը։

ՍԱՐԱՏՕՎ։ Կուրդիմի մօտ ջարդվեց պօստային գնացքը, որ գնում էր Սարատովից։ Ապրանքատար գնացքից, որ առջեւն էր գտնվում, կտրվեցին 14 ցիստէրն-վագոններ, որոնք ընդհարվելով մարդատար գնացքին, ջարդեցին բագաժի, պօստային եւ 4 մարդատար վագոններ. սպանվեցին 5 հոգի, ծանր կերպով վիրաւորվեցին վեց, թեթեւ—15 հոգի։ Վիրաւորվածներին տարան Սարատով։

ԼՕՆԴՕՆ. Լուրերին նայելով, Միրներ ժայիսի սկզբին կը գայ Անգլիա երկու ամսով մինիստրութեանը բացատրելու իր հայեացքը գրութեան վրա հարաւային Աֆրիկայում։

ՊԱՐԻԶ։ Լուրեր ժամանեց առաւօտեան։

ՆԻՑՑԱ։ Ռուսաց նաւատորմը ճանապարհ ընկաւ առաւօտեան Վիլլաֆրանկայից։ Կրէյսէր Ալէքսանդր II գնում է Տուլօն, մնացած նաւերը—Բարսելօնա։

ՊԷԿԻՆ։ Լիւ գրաւում է զօրեղ դիրք Խոյլիայի մօտ, 120 մղոն հեռու Պաօտինֆուից։ 5000 գերմանական եւ 3000 ֆրանսիական զօրքեր կը գործադրվեն արշաւանքի համար նրա դէմ։ Ուրիշ զօրքեր գնում են վաղը եւ ուրբաթ Պէկինից։ Արշաւանքի հրամանատարն է գեներալ-մայոր Գայլ։ Չինական ոյժերը, լուրերին նայելով, բաղկացած են 10,000 մարդուց։ Սպասվում է կատաղի կռիւ։ Չինական դիրքը գրանվում է մի քանի մղոնով հեռու այն սահմաններից, որ ցոյց է տուել կոմս Վալդերզէէ, որպէս դաշնակից զօրքերի գործողութեան շրջան։ Լիւ մինչեւ այժմ հրաժարվում էր հեռանալ, յայտնելով, որ եթէ դաշնակիցները ցանկանում են նրա հեռանալը, թող իրանք գան եւ ստիպեն նրան հեռանալ։ Այսօր տեղեկութիւններ են ստացված ֆրանսիական աղբիւրից, որոնք ստիպում են կարծել, որ այժմ նա յետ է քաշվում, սակայն ենթադրում են, որ եթէ դա ճիշտ է, այն ժամանակ նա յետ կը քաշվի ընդամենը 8 մղոն՝ աւելի եւս զօրեղ դիրք գրաւելու համար։

Դեսպանները որոշեցին յետ տալ չինացիներին ցզունգ-լի-եամէնի արխիվը։

5 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի հրամանը. «Թագաւոր Կայսրի Բարձրագոյն կամքով ես կոչված եմ վարելու ժողովրդական լուսաւորութեան այժմ առանձնապէս կարեւոր նշանակութիւն ունեցող պաշտօնը։ Ես կը գործադրեմ իմ հասկացողութեան բոլոր ոյժերը արդարացնելու համար Միապետի բարձր վստահութիւնը եւ կատարելու Բարձրագոյն ինձ վրայ դրած յանձնարարութիւնը։ Բարձրագոյն հրովարտակի մէջ, որին Նորին Կայսերական Մեծութիւնը հաճել էր արժա-

նացնել ինձ այս տարվայ մարտի 25-ին, համառոտապէս ցոյց է տուած իմ առաջիկայ գործունէութեան ամբողջ ծրագիրը, ինչպէս օրինակ մեր ուսումնական մասի կազմակերպութեան հիմնական վերաքննութիւնը եւ ուղղումը, մեր ռուսական ուսումնարանի վերանորոգումն եւ կարգաւորութիւնը եւ ռուս երիտասարդութեան կրթութեան գործի մէջ խելացիութիւն եւ սրտագին հոգատարութիւն մտցնելը։ Այս Բարձրագոյն նախագծված ծրագրի ճիշտ եւ անշեղ կատարումը պէտք է համարվի ինձ ենթարկված հաստատութիւնների համար սրբազան պարտաւորութիւն. մի եւ նոյն ժամանակ ծրագրի առաջին, ամենակարեւոր մասը, ուսումնական կազմակերպութեան բարենորոգութիւնը, որին, ի կատարումն Բարձրագոյն կամքի, պէտք է ձեռնամուխ լինել առանց յետաձգութեան, յամենայն դէպս կը պահանջէ որոշ ժամանակ ամբողջովին իրագործվելու համար. երկրորդ, նրա ոչ նուազ նշանաւոր մասը—երիտասարդութեան կրթութեան գործի մէջ խելացիութիւն, սէր եւ սրտագին հոգատարութիւն մտցնելը—մշտապէս եղել է ուսումնական կազմի մերձաւոր կատարելիքը, որ եւ գործադրել է այն աւելի եւ կամ պակաս աջողութեամբ։ Այսուհետեւ այդ բանը դրվում է նրա վրա, որպէս առաջին, անշեղ գործադրելի եւ անհրաժեշտ պարտաւորութիւն։ Ցուսալով, որ իմ մերձաւոր աշխատակիցներս եւ այժմ ինձ յանձնված մինիստրութեան մէջ բոլոր ծառայողները ցոյց կը տան ինձ լիակատար աջակցութիւն՝ Բարձրագոյն ինձ վրա դրած յանձնարարութիւնը կատարելու համար, ես հրաւիրում եմ նրանց դէպի միաբան, միասիրտ եւ անխոնջ աշխատանք Բարձրագոյն ցոյց տուած ծրագրի իրագործման հարցում։ Ես հրաւիրում եմ ուսուցչական կազմին մերձաւոր շրջման մէջ մտնել ուսանող երիտասարդութեան հետ եւ, անկախ դասատուութիւնից, նպաստել երիտասարդութեան դաստիարակութեան՝ սիրոյ եւ սրտագին հոգացողութեան յարաբերութեան վրա հիմնված։ Ես հրաւիրում եմ ուսանողների ծնողներին եւ ընտանիքներին, ընտանեկան ազդեցութիւն գործ դնելով իրանց որդոց վրա, օգնել ինձ յանձնված մինիստրութեան իրագործելու երիտասարդ սերնդի դաստիարակութեան մեծ գործը, միշտ յիշելով, որ դաստիարակութեան հիմքը ընտանիքի մէջ է եւ նրա առաջադիմութիւնը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ ընտանիքը եւ դպրոցը փոխադարձաբար աջակցում են միմեանց եւ չիվում են միմեանց հետ։ Ես հրաւիրում եմ ուսանող երիտասարդութիւնը վստահութեամբ վերաբերվել կառավարութեան ձեռնարկած միջոցներին, հաւատալ, թէ անդադար հոգացվում է նրա մասին, յիշել իր պարտքը, կատարել իր պարտաւորութիւնները եւ, հանգիստ պարապելով գիտութիւնների ուսումնասիրութեամբ, տալ մեզ հնարաւորութիւն նուիրելու մեր ժամանակը եւ այժմը ռուսական դպրոցը եւ ուսումնական գործը կարգաւորելուն։ Ես խորապէս համոզված եմ եւ սրբութեամբ հաւատում եմ, որ սրտագին միութեամբ եւ փոխադարձ աջակցութեամբ մենք, Աստուծոյ օգնութեամբ, մօտիկ ապագայում հնարաւորութիւն կունենանք կատարելու սիրեցեալ Միապետի ցանկութիւնը—տեսնել ռուս երիտասարդութեան մէջ հայրենիքի հաստատուն եւ հաւատարիմ յոյսը եւ նրա ապագայ աւուր նեցուկը ապագայում»։

Հրատարակված է Բարձրագոյն հրաման սահմանելու պարտադիր ընդունելութիւն կշռով հացահատիկների, աղացած արդիւնքների եւ սերմերի։

Զինուորական մինիստրի հրամանով յայտարարվում են Բարձրագոյն հաստատված փոփոխութիւնները այն յօդուածների, որոնք վերաբերում են օֆիցերական ամուսնութիւններին։ Նոր կանոնները գործադրութեան մէջ կը մտցնվեն 1902 թուականի յունվարի 1-ից։

ՊԵԿԻՆ։ Կայսրուհու պալատը, որի մէջ ապրում էր Վալդերզէէ իր շաբի հետ, այրվեց։ Գեներալ Շվարցհօֆ անհետ կորաւ։ Բացի զինուորական թղթերից՝ ամեն ինչ այրվեց։

ՊԵԿԻՆ։ Կայսերական պալատի մի մասը, որի մէջ ապրում էր Վալդերզէէ, եւ աղբէատի տնակը իսպառ այրվեցին։ Ինքը Վալդերզէէ ազատվեց աղբէատի տնակի պատուհանից։ Գեներալ Շվարցհօֆ անհետ կորաւ. նա, երեւի այրվեց այն ժամանակ, երբ նորից մտաւ այրվող տան մէջ, մի անգամ այնտեղից դուրս գալուց յետոյ։ Ուրիշ դժբախտ դէպքերի մասին առայժմ ոչինչ յայտնի չէ։ Կրակը, ինչպէս կարծում են, տարածվեց բացակայ մայեոր Լաուէնշտէյնի բնակարանից։ Կասկածում են, թէ տեղի է ունեցել հրձիգութիւն։

ԲԷԼԳՐԱԴ։ Գահաժառանգութեան վերաբերեալ կանոնները մշակված են։ Համաձայն այդ կանոնների, թագաւորին յաջորդում ամենից առաջ նրա արական սերունդը ուղիղ գծով. եթէ թագաւորը չունի արական սերունդ, գահաժառանգութիւնը անցնում է կողմնակի արական գծին, եւ եթէ դա ևս չը կայ, թագաւորին յաջորդում են նրա իգական ժառանգները ուղիղ գծով՝ սերված թագաւորի օրինաւոր ամուսնութիւնից։ Թագաւորի մահվան դէպքում, այրի թագուհին նշանակվում է խնամակալուհի փոքրահասակ թագաւորի անունով, երբ այդպիսին կայ։

ՍՕՖԻԱ։ Այսօր բացվեց մակեդոնական կօնգրէսը. նախագահ ընտրված է պրոֆէսոր Միխայլովսկի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ս. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վիներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), և վիներ. հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Աւովանիսեանի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱԼԲՈՄԻ

Ի յիշատակ հռչակաւոր նկարիչ պրոֆէսոր Ի. Այվազովսկու

Ալբոմը բաղկացած կը լինի զուտ նկարչական եւ երաժշտական բաժանմունքներից։ Երաժշտական մասում, ի միջի այլոց, զետեղված կը լինեն զուտ հայկական ժողովրդական երգեր ու պարերգեր։ Նկարչականը—պատկերների, էսկիզների, եղիւդների, նաբրոսկանների ու վինետկանների փոքրագիրներից—գունաւոր, ֆոտոտիպօ—ցինկոգրաֆով։ Ժողովածուին մասնակցում են յայտնի երիտասարդ նկարիչներ ու երաժիշտներ։

Խմբագիր հրատարակիչներ՝
Կօնսերվ. ուս. Ե. Բաղդասարեանց
Գեղարուեստ. ճեմ. ուս. Դ. Օքրոյեանց

Բաժանորդագինն է 1 ր. 50 կ. ապագրութիւնից յետոյ 3 ռուբլի։

Բաժանորդ գրվող ցանկացողներին խնդրում ենք դիմել հետեւեալ հասցէով. С.-Петербургъ, Академія Художествъ, Окроянцу. 1—3

Այն անձինք, որոնք կը կամենան իրանց լուման նուիրել Թիֆլիսում ուսումնարան—ապաստարան հիմնելու թշուառ խուլուհամրերի համար, կարող են ուղարկել իրանց նուէրները Թիֆլիսի փոխադարձ կրէդիտի ընկերութեան (Երեւանեան հրապարակի վրայ), ուր բացված է ընթացիկ հաշիւ ուսումնարան—ապաստարանի համար (№ 735)։ 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

խնդրում է մեծապատիւ անդամներին, կիրակի, ապրիլի 8-ին, առաւօտեան ժամը 11-ին ինորհ բերել ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովին, որ տեղի է ունենալու ընկերութեան Կար ու Զեւի արհեստանոցում, Գանօվսկայա, № 25։

Նոյն արհեստանոցում ապրիլի 8-ին, առաւօտեան ժամը 10-ին, տեղի կունենայ արհեստանոց յաճախող խեղճ օրիորդների ձեռագործների վաճառումը։ 2—3

Ապրիլի 7-ին Մուշտայիդ այգում կը լինի

ԶԲՕՍԱՆՔ

ՑՕԳՈՒՏ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կը նուագեն երկու խումբ զինուորական երաժիշտներ, մէկը Մինգրէլեան գնդինը։ Կը բաժանվեն սիւրպրիզներ, քաղցրեղէններ։ Վերջում տեղի կունենայ շրջագայութիւն երաժիշտներով, լապտերներով, բենգալեան մոմերով եւ ջահերով։ Զբօսանքին կը մասնակցէ մի հեռաքրքրական եապօնացի հսկայ։ Մուտքի գինն է 20 կոպէկ։ Երեխաները վճարում են կէսը։

Սկիզբն է ցերեկվայ ժամը 3-ին։

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Վերադառնալով արտասահմանից ընդունում է բերանի եւ առամների հիւանդութիւններ ունեցողներին։ Առաւօտեան 8—2, երեկոյեան 5—8։ Հասցէն՝ Пушкинская ул. № 16, надъ магазиномъ Шадинова. 1—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Ուրբաթ, ապրիլի 6-ին, 1901 թ.

Դերասան ԴԱԼՖԱՆՑԵԱՆԸ

բարեհաճ մասնակցութեամբ օր. Խիթարեան տիկնայք Զաբէլի եւ Նազելիի, պ.պ. Մանդինեանի, Նիկ. Աբրահամեանի, Մուրադբէգեանի, Գնունիի, Միրզայեանի, Ամոյի, Արէշեանի, Թերզիբաշեանի, Տէր-Ղազարեանի, Յովհաննիսեանի, Բաբուրեանի, Բերինեանի եւ այլոց

Կը ներկայացնէ

„ՀԱՄԼԷՏ“

Ողբերգութ. 5 գործող. և 10 պատկ. հեղ. Շէքսպիր

Տոմսակները վաճառվում են թատրոնի կասայում, ապրիլի 2-ից առաւօտեան 10 ժամից

Սկիզբն է ուղիղ 8 ժամին երեկոյեան

ՀՐԱՒԷՐ

Ապրիլի 8-ին, կիրակի, առաւօտեան ժամ 10-ին, Էջմիածնեցոց տուրք Գէորգ եկեղեցու ժողով է լինելու նոր երէցփոխ ընտրելու, ուստի սրանով մեծապատիւ պպ. ծխականներ երկրորդ անգամ հրաւիրվում են ներկայ լինելու յիշեալ եկեղեցումը ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ բ. մասի Թիֆլիսի՝
1—2 Գրիգոր ա. քահ. Մանդակունի

„ՈՐՈՏԱՆ“

Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

պատիւ ունի յայտնելու բաժնետէրերին, որ ընդհանուր ժողովի նիստը նշանակված է ապրիլի 8-ին, ժամը 11-ին, առաւօտեան, ընկերութեան գրասենեակում, Կոլուբեակինսկայա փողոց տուն Կովալեսկի, Բաքու։

Ժողովին ներկայ լինել ցանկացողը պէտք է ներկայացնէ եւ բաժնետոմսը։

Գրաւականք. 1) Հաշիւ 1900 թիւ. 2) Վերաստուգող յանձնաժողովի ընտրութիւն։

Օգուտի բաժանումն։ (ապ. 5, 8) 3—5

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ն. Ի. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴՈՑ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

(Firman գոյութիւն ունի 1858 թիւից)

Թիֆլիսի մի քանի ծխախոտի գործարաններ իրանց պատրաստած պապիրոսների էտիկետները սկսել են նմանեցնել մեր էտիկետներին, որ եւ այդ արտաքին նմանութիւնը մեր մշտական գնողներից չատերին բազմիցս սխալանքի մէջ է գցել։ № 8 պապիրոսները պարունակվում են կարմիր ծարներում՝ 10 հատը 5 կոպ. արժողութեամբ, արկղներում՝ 10-ը 10 կոպ., իսկ № 15 «Սիմպատիա» 10 հ. 5 կոպ. եւ № 7—10 հ. 3 կոպ.։

Ուստի Առեւտրական տունը խնդրում է ուշադրութիւն դարձնել Ն. Ի. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴՈՑ մակագրութեան վրա։ (Ե. հ. կ.) 4—6

Ներկայ մարտի 1-ից բացված է սկլադ կերոսինի, մազութի, գուդրոնի, եւ մազութ այլ նաւթային արտադրութիւնների, հետեւեալ ֆիրմայով

„Առաջին կերոսինային սկլադ Խօջաբագիրով եւ ընկ

Ունենալով միշտ սկլադում պաշար վերոյիշեալ նաւթարդիւնքների, ամեն պատուէր, թէ պէս Բաքու քաղաքի համար, նոյնպէս նաւթահանքերի եւ այլ տեղերի համար կատարվում է անմիջապէս եւ ճշդիւ։

Սկլադը գտնվում է Տէլէֆոնայա փողոց, սեփական տուն (երկաթուղային կայարանի մօտ)։ Տէլէֆոն № 44, իսկ բնակարանինը 248։ (Ե. ռ.) 5—10

ՇՈԳԵՇԱՐԺ

Կօնֆէկտի եւ շօկօլադի գործարան

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են շաքարեղէնների ամեն տեսակ տատրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ։

Պատրաստում ենք. կարամէլ մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (съ начинкой), մարմէլադ (пастила), զէֆիր (зефиръ), դրաժէ (драже), քէրվա-շաքար (պաղ-շաքար, леденецы)

Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքի հրաւիրված յայտնի վարպետի հսկողութեան տակ։

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշդութեամբ։

Գրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի։

Պատուէրների համար դիմել՝ Тифлисъ, Нахаловка, Пакловская улица, собственный домъ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազինում—Գ. Ս. Տէր-Սիմոնեանցի, Զ. Ի. Սուլխանեանի, Զ. Գ. Պօպովի, Ս. Ի. Մ. Աբրահամովների, Հաջի-Ռահմանովի պարսկական մագազինում եւ Պետրոսի իտալական մագազինում եւ այլն։ (չ. կ.) 4—100

Дозволено цензурою, Тифлисъ, 5 Апрѣля 1901 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27